№ 172 Սեպտեմբերի 17 (29) 1881 Սեպտեմբերի 17 (29) № 172

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք պիտի ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Նամակ Շուշուց· Ներքին լուրեր·—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Հայոց խնդիր· Անգլիա· Նամակ Թիւրքիայից·—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ·—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ· Ցնտեսական հարց և ազգային կրթութիւն·

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Սեպտեմբերի 1-ին

Պատիւ ունեմ յայտնել չուշեցի այն պարոններին, որոնք թէ ճշմարիտ, թէ սուտ (վերջիններս չեմ իմանում ինչ չար նպատակով) հրապարակում բացատրութիւններ են պահանջում Շուշվայ հասարակական գրադարանի մասին, մինչդեռ նրանք արդէն ստացել են իրանց ցանկացածը և միշտ կարող են ստանալ Շուշու մանուկ գրատան մէջ։ Արցախեցու («Մեղու» մի համարի մէջ յայտնած) պահանջից սոսկալած պէտք է յայտնեմ, որ հասարակական գրադարանի կանոնադրութիւնը ուղարկած է Գանձակի նահանգապետին երկու տարի առաջ, հանդերձ խոնարհաբար խնդրելով քաղաքի ներկայացուցիչներից, թոյլ տալ բանալ այդ կարևոր հաստատութիւնը։ 1880 ամի սկզբումը Շուշու գաւառապետից նահանգապետը պահանջել է կայացնել ընդհանրական վճիռ (mirскій приговоръ), որ և կատարված է մէկ քանի ամիսներից յետոյ, բայց մինչև այժմ ոչինչ պատասխան չը կայ, չը նայած, որ քաղաքը երեք անդամ կրկնել է իր խնդիրքը զանազան ժամանակներում, վերջին անգամը, բոլոր ստորագրութիւնով, ուր ուղղակի խնդրել են հարցը վճռել կամ այսպէս, կամ այնպէս, վասն զի գրեանքը, կահ-կարասիքը և այլն փտում են ի զուր։ Բայց մինչև այժմ ոչինչ պատասխան չը կայ։

Այս տարի ապրիլ ամսին, երբ բացվեց Շուշու մանուկ գրատունը—ընթերցարանը՝ հասարակական գրատան վարչութիւնը բարւոք համարեց իր գրեանքը, կահ-կարասիքը տալ իր պատասխանատուութեամբ և գրատան անդամների համաձայնութեամբ յիշեալ մանուկ գրատան, այնպէս որ մեր անդամները իրաւունք ունենան առանց նոր վարձի ամբողջ տարին կարդալ թէ ընթերցարանի և թէ գրատան մէջ։ Բայց երբ հասարակական գրատուն բանալու թոյլատուութիւնը ստացվեց, այն ժամանակը մեր բոլոր գրեանքը, կահ-կարասիքը պէտք է մեզ յետ դարձնեն։ Տարեկան անդամների թիւը մօտ 80 է, դրանցից միայն յիսունն է վճարել իր վարձը, ընդամենը 500 ր., որոնցից 60 րուբլին կոտած է մի պարոնի ձեռով, որը իր ժամանակին կը հրապարակվի, մնում է 440 րուբլի։ Հասարակական գրատունը ունի մօտ 500 հատոր գրքեանք, ստանում է մօտ 300 րուբլու արժողութեամբ ամսագրեր և օրագրեր, թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ վրացերէն։ Դախսում է իր հաշւից, տուն, գրապահ, ծառայ, փայտ, ճրագ և այլն ունենալու համար 440 մանէթից աւելի փող, ուրեմն, ո՞րտեղից այդ է բոլորը, պ. Արցախեցի։ Դրա համար մտածեմ—ամագիր կայ, կարող էք ամեն օր ստուգել։ 440 մանէթ փող ունենալ և ծախսել մօտ 1000 մանէթ, դա հետաքրքրութեան արժանի բան է։ Սրբազան պարտք եմ համարում հրապարակով յայտնել, որ գրեանց և պարբերական թղթերի մեծ մասը նուիրատուութիւններ են, որոնց համար իր ժամանակին վարչութիւնը հաշիւ կը ներկայացնի. որ ուրիշ քաղաքացիք, օտարները և մանաւանդ աղքատ ուսումնականները աւելի են օգնում այս գործին, քան թէ բուն, հարուստ ղարաբաղցիք, որոնք իրանց չար լեզուով, անտարբերութիւնով, մէկ քանիսն էլ մանուկ թիւններով մեծ վնասներ են պատճառում այդ բարի գործին։ Այդքան լրագրեր, օրագրեր են ստացվում գրատան մէջ, արդեօք քանի՞ հօջաներ, իշխաններ, արխա—չարչիներ են գալիս, կարդում։ Ցաւալի է տեսնել հոգեկիրթ առաջարկների քաղաքական դրութիւնը դեռ պարզ չէ։ Թէ որքան այս ենթադրութիւնները հիմնաւոր կամ անհիմն են, այդ կը բղխէ հետևաբար մեր այս գրուածքի գլխաւոր դիտողութիւնների հաստատ կամ անհաստատ լինելուց։

Սակայն, ոչ թէ այդ հաստատելն է մեր այս տողերի գլխաւոր նպատակը, այլ այն, թէ ինչ քննաւորութիւն ունի և կամ պիտի ունենար ժամանակի հարցը Հայաստանի համար, որոշել այն տեղը, որը նա պիտի բռնէ մեր ազգային այլ հարցերի մէջ և այդ արած վերջացրած՝ քննել այն առաջարկութիւնները և կամ կարծիքները, որոնց յայտնվելուն ժամանակի հարցի զարթնելը անմիջապէս տեղիք է տուած։

Առանց կանխապէս դատել ցանկալու, բերենք այն կարծիքները։

Հազիւ թէ սխալանքի տեղի տուած լինենք, եթէ այդ առաջարկների և նոցա պայմանաւորող ուղղութիւնների համագումարը այս երկու գլխաւոր կէտերի մէջ ամփոփելու լինենք։ Միքանիները այն կարծիքի են 1) Հայաստանի ազգային վերածնունդը նրա կրթութիւնից սպասելու է, ուստի կրթութիւն նրան մատակարարելով՝ նրա ազգային, քաղաքական և դոցա հետ միասին նրա տնտեսական զարգացումը ապահովել կը նշանակէ. երկրորդները յարելով իրենց համոզման վրա պնդում են թէ 2) Հայաստանի ազգային և քաղաքական զարգացումը պիտի նրա տնտեսական յառաջադիմութիւնից սպասվի, ուստի տնտեսապէս նրան հոգալով՝ նրա քաղաքական ապագան ապահովել կը նշանակէ։ Ուղղութիւնները այդ երկուքը լինելով, առաջարկները դրանց համապատասխան երկուքն են. առաջինների համար՝ ուսումնարանը իր, կարծեան համար ասենք, հոգեկիրթ առարկաներով, սունդուկները տրաքելիս արծաթից, փորերը չաղութենից», իսկ գրատունը իր չտեսարանով, որը հաւաքած է աղքատ մարդկերանց գրպաններից, առանց ընթերցողներին։ Այս, այդ բոլորը կարող էր մեզ յուսահատեցնել, եթէ մենք սկզբից աւելի վատը չը լինէինք սպասած։ Գրատան հաշիւը, ընթերցողների, կոծանիչների, նուիրատուների թիւը և այլն, բոլորը իւր ժամանակին կը տպագրվի։

Մ. Ա.ստամեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յօգուտ «Ժուրնալ դ'Օրիանի» ստացանք Թիֆլիսից Աւետիք վարդապետեանից 2 ր., Կիչնեվից, Ստեփաննոս վ. Մխիթարեանից 4 ր., Ջալալօղլուց, Միքայել Խանազեանից 5 ր., Բագուից բժիշկ Արամեանից 4 ր., Կիևվից, Լուկեան Զակիեվից 4 ր. և Գրիգոր Բօյեաջեանից 4 ր., Ջիբրայիլից, Աղէքս. Մելիք-Շահնազարեանից 10 ր.։ Ուրեմն ընդամենը առաջվայ փողերի հետ, հաշւելով և այն 413 րուբլ, որ Ղարսից արդէն ստացանք և որի ցուցակը կը տպենք, ունենք այժմ 1035 րուբլ։

—

Ստացանք յօգուտ Կ. Պօլսի «Միացեալ ընկերութեան» Ջիբրայիլից պ. Առաքել Վարդապետեանից 10 ր., Միքայել Համայեանից 10 ր. և Թիֆլիսից պ. Աւետիք Վարդապետեանից 3 ր.։ Բացի սորանից Աղէքսանդրապօլից պ. Մարտիրոս Բաղդասեանից, որ մասնաւոր վէճ ունէր իր մի բարեկամի հետ և այդ գործը խաղաղ վերջացնելով, ստացանք պարոնից 30 րուբլ, իր սեփական պահանջը իր բարեկամից, որ նա նոյնպէս նուիրում է յօգուտ «Միացեալ ընկերութեան»։

—

Ստացանք «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար պ. Ս. Բէգնազարեանից, Երևանից 4 ր.։ Առաջվայ փողի հետ կանի 1039 րուբլ։

—

Տպում ենք Ղարսից ստացած յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» ուղարկված 100 րուբլ գումարի նուիրողների ցուցակը։ Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեանց, բժիշկ Աւէքս. Ղազազեանց, բժ. Աւէքս. Տէր-Յարութիւնեան, բժ. Գէորգ Կաճկաճեանց, Սարգիս Մուրադեանց, Բարսեղ Աբէլեանց, Տիգրան Ախշարումեանց, Դաբրիէլ Էհրամջեանց, իւրաքանչիւրը տուեցին 8 րուբլ։ Աւէքսանդր Բէգեանց, Սարգիս Թոսունեանց, Բարսեղ Մանուկեանց, Դաբրիէլ Թէլեթեանց, Մանուկ Բաղդասարեանց, Սարգիս Մուրուզեանց, Աւետիս Եղիազարեանց, Գալուստ Բաղրամեանց, Արշակ Յովհաննէսեանց իւրաքանչիւրը 4 րուբլ։ Իսկ 313 րուբլ գումարի ցուցակը կը տպենք առանձին։

—

Պ. Ղազեանց խնդրում է մեզ յայտնել, որ նա բաց է արել Թիֆլիսում, այս սեպտեմբերի 1-ից, պարելու դահլիճ, որտեղ ուսուցանում է բոլոր եւրօպական պարերը։ Համաձայն է դասեր տալ տներում և ուսումնարաններում։ Դահլիճը գտնվում է Ներսիսեան դպրոցի հին շինութեան մէջ, որտեղ կարելի է իմանալ և պայմանների մասին։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են։ «Օգոստոսի 24-ին տեղիս հայոց հոգևոր դպրոցներում ուսում սկսվեցաւ։ Հասարակութիւնը համակրութեամբ է վերաբերվում դէպի մեր դպրոցները։ Օրիորդաց դպրոցում բացի գիտութեան առարկաներից այս տարի ևս ընդարձակ ձևով մացնվեցաւ արհեստի մատակարարութիւնը. բացի թելահիւս արհեստից, պէտք է նաև կանոնաւոր կարի և ձևի արհեստը ուսուցանվի, որպէս զի ուսումնաւարտ աշակերտուհիները կարողանան ազնիւ կերպով հաց ճարելու. ճանապարհ բանալ իրանց համար։

—

քերով ասած՝ այդ առաջարկութիւնները ազգային վերականգման սիստեմներ են։

Այդ երբէք չը պիտի մոռացվի այս եզրակացութիւնը, վի քաղաքական արդասիքն է մեր բոլոր ազգային գործողութիւնների ձգտալարը, վի նա է այն իշխող գաղափարը, որից գիտակցաբար թէ անգիտակցաբար մեր մտածողութիւնները իրենց առաջի աղբիւրն են առնում և որի մէջ մեր համայն ազգային ձգտումները իրենց վերջին սահմանն են գտնում։ Քաղաքական արդիւնքն է այն չափը, որով պիտի կշռվեն մեր ազգային չահերը։ Բայց թէ արդեօք քաղաքական չահերին բոլոր միւս չահերի վրա իշխանութիւն չնորհելը խելացի վարվողութիւն է, այդ երբէք չը պիտի կասկածվէր, քանի որ այն բոլոր ազգերը, որոնք դրան չեն հետևած և կամ կորուսած են այդ տեսակէտը իրենց ազգային ցուցմունքների, մանիֆեստացիոնների մէջ, նրանք ամենադառը կերպով զղջացած են վերջը։—

Այդ այդպէս լինելով, հարցնում ենք, թէ արդեօք ինչ են նշանակում «քաղաքական չահեր» բառերը, երբ խօսքը երկրագործ, արհեստաւոր, վաճառական և ուսումնական դասի վրա է։ Ինչ կապ ունի քաղաքականութիւնը՝ ուսումնարանի և արուեստի հետ։ Խօսք չը կայ որ այդ կապը մի և նոյնն է, ինչ որ կայ առհասարակ կրթութեան և քաղաքականութեան մէջ, որովհետև թէ ուսումնարանը և թէ արուեստը մարդուս վրա այնպէս են ազդում, որ ազգային կեանքի համար նրանք այսպէս կամ այնպէս մի որոշ ուղղութիւն են ստանում։ Ասել է թէ, մեր ուզեցածը այն է իմանալ, թէ ինչումն է կայանում քաղաքական կրթութիւնը և այդ ցանկացած կրթութեան որ մասումն է բաւականացնում հո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

—

Ցնտեսական հարցը, դուրս ելած իր առաջին շրջանից, որ իր ծննդական շրջանը կարելի է անուանել, նուազ առ նուազ սպառնում է դառնալ մի ազգային խնդիր, այս բառի բուն նշանակութեամբ։ Ծաւալելով Հայաստանի ծայրէն ի ծայր, նա դրանով արդէն իր կարևորութիւնը ամենաակներև կերպով ցոյց տուեց. իսկ եթէ նա ամենքի մօտ նոյն հիւրասիրութիւնը չը գտաւ,—մեղաւորը նա ինքը չէ, նա, որ իբրև մի բնական հոսանք, իր ընթացքով կընթանայ, այլ մեղաւորը նրա ելքը փակողներն են, որոնք չեն զգում, թէ այդպէս վարվելով նրանք պատճառ կարող են լինել հեղ հոսանքին ծով դառնալու, մի ծով, որի ճայթման բուռը ճայնից նրբանք առաջինը պիտի լինեն, որ սարսափով պիտի փախչեն։

Կարելի է ենթադրել, որ հայկական տնտեսական հարցին նուազ կարևորութիւն տուողները երկու տեսակ անձեր են. անձեր՝ առանց պարզ հասկացողութեան այն դիրքի վրա, որը բռնում է տնտեսականութիւնը ազգութեան գոյութեան մէջ, և անձեր՝ որոնց համար Տաճկա-Հայաստանի

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

Ա.յս վերնագրով տպված է հետևեալ յօդուածը „Journal d'Orient“ վիէննայի լրագրի մէջ։

Ա.յն միջոցները, որ գործ դրեցին մեր ձայնը խեղդելու համար, մեզ չեն արգելի անդադար կրկնելու թէ օսմանեան կառավարութիւնը կարծես ինքն է աշխատում կորցնել հայերով բնակված նահանգները, քիւրդերին քաջալերելով, թէ ժամը հասել է, երբ հարկաւոր է գործ դնել եւրօպայից անհրաժեշտ ճանաչված բարենորոգումները Հայաստանի մէջ, և թէ Բ. Դուռը ուրիշ ելք չունի, բացի շտապելուց այդ վերանորոգումները մոցնելու, եթէ նա չէ կամենում այնպիսի հետևանքներ առաջ բերել, որոնք կը սպիտկեին հայերին որոնել և գտնել իրանց փրկութիւնը օսմանեան կայսերութեան հովանաւորութենից դուրս, քանի որ թիւրքաց կառավարութիւնը, ինչպէս երևում է, չունի ոչ կամք, ոչ զօրութիւն պաշտպանել իր հպատակ հայերի կեանքը և կայքը թափառական մահմետական ցեղերի արշաւանքների և տեղական պաշտօնեաների կամայականութեան դէմ։

Մենք անդադար կաղաղակենք քիւրդերի մասին, մինչև որ եւրօպան վերջնականապէս չը կարգադրի ու չապահովացնի հայերի դրութիւնը թիւրքիայում, նոյն իսկ Բ. Դրան գործակցութեամբ, եթէ սա խելացի կը գտնվի, բայց առանց նրա օգնութեան, նրա կամքին հակառակ, եթէ Բ. Դուռը չը կամենայ ճանաչել և հասկանալ որ իր շահն է պահանջում չը յարուցանել նոր յուզմունքներ ու դժուարութիւններ արևելեան խնդրի վերաբերութեամբ, որի հետևանքը կը լինէր, ինչպէս 1878 թուից յետոյ, Սուլթանի այժմեան երկիրների մէջ նոր ինքնավարութիւնների հիմնելը ազգային սկզբունքին համեմատ։

Ա.յդտեղ „Journal d'Orient“ հրատարակում է Դիարբեքիրի եպիսկոպոս Փիլիպոս Նաջարեանցի նամակի թարգմանութիւնը, որ սա տպել է «Stamboul» լրագրի մէջ։ Թող այդ նամակը, աւելացնում է վիէննայի ֆրանսիական լրագիրը, մի նախազգուշութիւն լինի գործի մէջ շահ ունեցող բոլոր մարդկանց համար։

„Մենք իմացանք, ասում է սրբազանը, որ այդպէս անուանված քիւրդ բէյերը, այդ թշուառ աւազակները, աջողեցան, չը գիտենք ինչպէս, ճնշել կ. Պօլսում։ Նրանք պնդում են թէ անիրաւացի կերպով դատապարտված են Ալբանիայի մէջ աքսորանքին, որովհետև նրանք մեղաւոր չեն և կուզենային ճանաչել իրանց մեղադրողներին, որպէս զի ապացուցանելով իրանց անմեղութիւնը, վերադառնան իրանց հայրենիքը։ Բոլորն էլ գիտեն թէ այդ քիւրդ աւազակների քննութիւնը և նրանց աքսորանքի դատապարտելը կատարվեցաւ Աբդէլ փաշայի կարգադրութեամբ։ Իսկ այդ աւազակների մեղադրողը ես եմ եղել և ես տուեցի նրանց գործած բարբարոսութիւնների մասին անհերքելի ապացոյցներ, թէ Բ. Դրանը և թէ հայոց պատրիարքարանին հեռագրելով։ Ա.յդ հեռագիրներից մինը ունի լինն ստորագրութիւն քրիստոնեայ այլ և այլ դաւանութիւնների գլխաւորների։ Ես նոյնպէս այդ գործի մասին զեկուցում ներ ուղարկեցի Ներսէս սրբազանին։ Ա.յդ ժամանակ, Բ. Դուռը, գործի այդ տեսակ դրութեանը վերջ տալու համար, ուղարկեց Աբդէդին փաշային Դիարբեքիր, որպէս լիազօր կօմիսէր։ Աբդէդին փաշա ազնիւ և խղճմտաւոր կերպով կատարեց իր յանձնառած պաշտօնը Դիարբեքիրում, որտեղ և կազմվեցաւ մի յանձնաժողով, որ բաղկացած էր նահանգապետից, կիազիմ-փաշա դատաւորից, լիազօր պաշտօնեայից, տեղական խորհրդի անդամներից և երկրի կրօնական գլխաւորներից։ Ա.յդ յանձնաժողովը սոսկաց քիւրդ աւազակների բոլոր բարբարոսութիւնները և կայացրեց դատավճիռ Ալբանիա նրանց աքսորելու մասին, նրանց ներկայութենից երկիրը վերջնականապէս մաքրելու համար։ Եթէ այդ քիւրդերը անմեղ էին, ի՞նչպէս կարող էր յանձնաժողովը անարդար կերպով աքսորել նրանց։ Մ՚իթէ Աբդէդին փաշան իր յանձն առած պաշտօնը կատարելու համար չը վարձատրվեցաւ նախ մուշիրութիւն ստանալով, յետոյ նահանգապետ նշանակվելով Սվազում և ապա Սալոնիկում և վերջապէս արտաքին գործերի մինիստր դառնալով։ Եթէ այդ թշուառները անմեղ էին, ի՞նչպէս նրանք չը կարողացան արդարանալ մինչև որ Աբդէդին-փաշան իր ձեռքում կառավարութեան դեկը բռնած ուներ։ Կառավարութիւնը չը պէտք է մոռանար, որ իրանց երկիրը վերադարձած, այդ քիւրդերը կրկնակի վրէժ կը հանեն քրիստոնեայ ժողովրդից։ Ես ասեցի և կրկնում եմ որ ես ինձ յայտնում եմ նրանց մեղադրողը, ես Դիարբէքիրի առաջնորդ լինելով, լաւ տեղեակ եմ նրանց գործած անիրաւութիւնների մասին։ Ես պատրաստ եմ ներկայանալ ամեն տեսակ դատարանի առջև Աբդէդին փաշայի ներկայութեամբ, այդ քիւրդերի մեղաւորութիւնը ապացուցանելու համար։“

Ա.յդ քաջասիրտ աբեղայի նամակը, ինչպէս ասում է „Ժուրնալ դ'Օրիան“ լրագիրը մի կատարեալ յայտնութիւն է։ Փիլիպպոս սրբազանը ազնիւ և քաջ մարդ է։ Մենք հաւատացած ենք, աւելացնում է ֆրանսիական լրագիրը, որ կ. Պօլսի դեսպանները և լուսաւորված եւրօպան կը լսեն նրա ձայնը։

Բամազանը վերջացած է, շարունակում է վիէննայի թերթը, Ցլօտտրը և Ուիլսօն անգլիական հիւպատոսները արդէն ներկայացրին իրանց զեկուցումը լօրդ Դիւֆերինին և հաւատացնում են որ այդ զեկուցման մէջ մեղադրանքներ կան, որոնք նոյնքան ծանրակշիռ են, որքան 1876 թուին Դունայի աջ ափում կատարված անգքերի մասին մեղադրանքները։ Բ. Դուռը պատասխանատու է այդ զեղծումների համար, բայց և եւրօպան պատասխանատու է նոյն զեղծումների համար, քանի որ նա ստորագրվել է Բերլինի դաշնագրի տակ և նա պարտաւոր է առանց յապաղման իր բարձր բազոյն կամքը յայտնել սուլթանին, որպէս զի սա հասկանայ վերջապէս թէ Հայաստանի մէջ բէֆֆօրմների անյապաղ իրագործելը մի անհրաժեշտ պահանջ է։

Անգլիան խօսեց, Ռուսաստանը իր պահանջները յայտնեց, Իտալիան նոյնպէս, այժմ հերթը Ֆրանսիային է պատկանում, ասում է „Journal d'Orient“ լրագիրը, Ֆրանսիային, որ իրաւունք չունի լռել այնպիսի մի հարցի մէջ, որտեղ քաղաքակրթութեան և մարդասիրութեան վեմ շահերը նրա աւանդական օգնութիւնն են պահանջում։

Ներսէս պատրիարքը, հայոց քաղաքական գլուխը, ազգի ընտրվածը իր կոչման բարձրութեան վրա է կանգնած։ Ներսէս սրբազանը միացնում է իր մէջ քաղաքական քաջութիւնը, որ պահանջում է ճշնշվածների օգնութիւնը, բարձր մտաւոր զարգացումը որ փրկութեան ճանապարհներ է բաց անում և միջոցներ է գտնել տալիս, և ոգու այն ոյժը, մեղմացրած զգուշութեամբ և քաղցրութեամբ, որ ընդդիմադրելով անհամբերներին, մի և նոյն ժամանակ օգևորում է թոյլերին։ Ներսէսը հաւատում է և յոյս ունի այն հաւատով և յոյսով, որ ընդունակ է տեղափոխել սարերը և բացանել գերեզմանների դռները։

Իր հետևեալ համարներում „Journal d'Orient“ լրագիրը խոստանում է նախ մի յօդուած տպել հայոց խնդրի մէջ ներած պատող մի քանի բացառական հայեացքների մասին և յետոյ ծանօթացնել իր ընթերցողներին Գրիզոր Արծրունու երկու դասախօսութիւնների հետ և այդ գրուածների գլխաւոր կէտերի մասին իր սեփական դիտողութիւններն անել։

ԱՆԳԼԻԱ

—

Սեպտեմբերի 8-ին Ոչխլսի իշխանը ներկայ էր Լիվերպուլի մէջ մի նոր նաւահանգիստի բացման հանդիսին, որ նոյնպիսի շքեղութեամբ կատարվեցաւ, ինչպէս և Գօնթլէօրի մէջ։ Անգլիական նաւահանգիստների և պահեստների այդպիսի ընդարձակումը ապացուցանում է, որ անգլիական առևտրի մէջ բէֆֆօրմների անյապաղ իրագործելը մի անհրաժեշտ պահանջ է։

գեկիրթ ուսումնարանը և արուեստակիրթ դպրոցը և թէ արդեօք այդ երկուքը միասին բաւականացուցիչ զարանտիաներ են տալիս մեզ մեր վերածննդեան գործին անհրաժեշտ համարած պայմանների իրագործվելուն թէ ոչ։

Ահա գլխաւոր հարցը։ Արդ, ով այլ տեսակ է հասկանում, թող յայտնէ, բայց քաղաքականապէս կրթել մի ազգ մենք այլ տեսակ չենք կարող հասկանալ, եթէ ոչ՝ կրթել նորան այնպէս, որպէս զի նա ուսմամբ թէ այլապէս, քաղաքացու ազատութիւնները վայելելու իր ընդունակութիւնները բազմակողմանի կերպով զարգացնէ։ Մեր խօսքը Տաճկա-Հայաստանի վրա լինելով, մեր ասածը, թարգմանած տաճկա-հայկական հանգամանքների վրա, պիտի նշանակէ՝ կրթել հայ մանուկին այնպէս, որ նա մի անզրդուելի ձգտում ունենայ քաղաքացի լինել, այսինքն քաղաքացու ազատութիւններ ձեռք բերել։ Բայց որովհետև կոյր պիտի լինել չը հասկանալու համար, որ այդ քաղաքական ազատութիւնները Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան իրաւունքների հետ միասին կարելի է միայն ձեռք բերել, ուստի վարանիլ պէտք է արդեօք պահանջելու, որ ինչ ձևերով և ուղենալու լինենք կրթել մեր հայկական սերունդը, նորա քաղաքական ոգին զարթեցնելու համար հարկ անհրաժեշտ է մի կողմից՝ արծարծել նորա մէջ Տաճկա-Հայաստանի ինքնավարութեան գաղափարը, իսկ միւս կողմից զարգացնել նորա մէջ այն ոյժերը, որոնք այդ գաղափարի յաղթութեան պայմաններն են՝ մասւոր կրթութիւն, ֆիզիքական ոյժ, քաջասրտութիւն և անտեսական ոյժ և այս վերջինը հինգ պատճառներով. նախ՝ որ հայը Հայաստանում սիրով մնալ կարողանայ, երկրորդ, որպէս զի հայը իր դրացիներին անտեսապէս անհերքելի կերպով ապացուցէ, ձրրորդ՝ որպէս զի ամեն տեղ ցրուած հայերին ապագայի համար ոչ թէ միայն ազգասիրութեան, այլ և գրական հիման վրա կարելիութիւն տրվի իրենց բուն հայրենիքը վերադառնալ, չորրորդ՝ և որը չատ կարևոր կէտ է, տաճկահայ գիւղացիներին սեպհականութիւն ունենալու կարելիութիւն տալ այն տեղերում, ուր տաճիկը հողային սեփականութիւնը իր ձեռին ունենալով, հայերին իր կախման մէջ է պահած, իսկ հինգերորդ՝ վերջապէս՝ ապահովելու մեր հայ ազգաբնակութեան ձեռքերին Հայաստանի արդիւնքները եւրօպական ապագայ գաղթականների և կապիտալիստների դէմ, որը այնքան հեռու չէ, որքան չատերը գուցէ իրենց երևակայել կարողանան։

Եթէ ընթերցողը համաձայն է մեզ հետ այս բոլոր կէտերի վրա, դէպի հարցի, որպէս տեսնում էք, ոչ այնքան հասարակ լուծումը մի համարեա թէ վերջնական քայլ ևս պիտի արած համարել։

Կը տայ մեզ, որպէս արդէն անուանեցինք, հոգեկիրթ ուսումնարանը այդ բոլորը արդեօք միասին. այդքան խոստանալուն գերմարդկային համարձակութիւն պէտք է, ուրեմն ոչ. և արուեստագիտութեան ուսումն միակ այդ բոլոր պահանջմունքներին նմանապէս չէ կարող բաւել, այդ ակներև է և ապացոյցի անկարօտ։ Բայց նրանցից իւրաքանչիւրը լրացնելով այն ընդհանրութեան մի որոշ մասը՝ այդ երկուքը ևս անուրանալի կերպով մեր ազգային վերածննդեան գործին կարևոր պայմաններ պիտի համարել։ Արդեօք այս քանի մէջ հատատ համոզվելու համար աւելի զօրեղ ապացոյցներ են հարկաւոր. մենք չենք կարծում։

Ա.յս մեկնութիւններից յետոյ, անտեղի չէր լինի մի խօսքով պարզել տնտեսական հարցի առիթով ծնած տարաձայնութիւնների բուն պատճառը։ Աւելորդ բացատրութիւնների կարօտութիւն չը կայ դիմելու. տարաձայնութեան խորին արմատը նրանում որոնելու է, որ ոմանք, ուսումնարանի և արուեստի քաղաքական բնաւորութիւններին սպասանալ գոլով, նրանց մէջ այլ ևս չը գիտեմ թէ ինչ աչքով այս կամ այն տարրերը կը ճգնին որոնել, որոնք մեր ազգային վերածննդեան այժմ ամենքի սիրտը բռնած գործի հետ գուցէ միայն մի հեռաւոր յարաբերութիւն ունեն, այն է՝ ուսումնարանի մէջ տեսնել միայն նորա տուած գիտութիւնները և չը տեսնել մի և նոյն ժամանակ այն կրթութիւնը, որը արծարծվում է երեխայի մէջ այդ գիտութիւնները աւանդելու մեթոդներով և այն ազգային հոգին, որը թելադրվում է նոյն երեխային նոյն իսկ ազգային ուսումնարանների ուղղութեամբ. իսկ արուեստագիտութեան զարգացման մէջ տեսնել միայն բուն հացի խնդիր և կամ ազգային պարծանքի մի առիթ, բայց չը հասկանալ նրա մէջ նրա քաղաքական նշանակութիւնը և այն դերը, որը տնտեսական զարգացման վիճակված է կատարելու մեր ազգային վերածննդեան գործի մէջ։

Ի նկատի առնելով մեր ազգային չահերի ամբողջութիւնը, մենք կը վստահանանք կարծելու որ ոչ թէ միայն տնտեսական հարցի, աւազ, այդքան ուշ զարթնելը գլխովին հիմնված է (փառք և պատիւ նորա զարթնիչներին!), այլ, և այս գուցէ չատերին անսպասելի թվի, ինչի մէջ մենք նմանապէս կարօտութիւն պիտի զգանք, այդ նոյն իսկ հոգեկիրթ ուսումնարանների հարցի լուծումն է։ Ուսումնարաններ հիմնել—խօսք չը կայ, նոյն իսկ այդ փաստը մի մեծ բան է—բայց ուսումնարաններ հիմնելով ինչ կը նպատակէ Միացեալ ընկերութիւնը. չէ որ «ազգային կրթութիւն» բառերը բոլոր լրագիրների, ակումբների և ժողովների նշանաբանն է դարձած։ Արդեօք այդ ուսումնարաններում աւարտած գիտութիւնները իրենց մէջ պիտի բովանդակեն ազգային կրթութիւն ասուած բանը, թէ այս վերջինը պիտի նաև մի այլ բան նշանակէ, քան թէ մի լոկ գիտութիւն։ Կրթել նշանակում է ուղղութիւն տալ, ուստի կրթութիւն տալ չէ նշանակում միայն ուսումնարան հիմնել, որովհետև կարելի է հիմնել նրան առանց ուղղութեան։ Արդ, չը կայ ոչ մի լուսաւոր երկիր, ուր ուսումնարանները լինէին առանց մի որ և է յայտնի ուղղութեան. ամեն երկրում ազգային ուսումնարանները ենթարկված են մի պրօգրամմի, որը ծնունդ է մի որ և է սիստեմի և որի գործադրութեամբ ազգի զաւակը ստանում է իր ժամանակուայ ընդհանրապէս, իսկ մասնաւորապէս իր երկրի, իր հայրենիքի պահանջմունքներին համեմատ թէ գիտութիւնը և թէ կրթութիւնը, այսինքն ուղղութիւնը, հոգին։ Բայց մեր տաճկա-հայկական հայրենիքի ամենագլխաւոր պահանջմունքն է՝ նորա քաղաքական վերածննդութիւնը, ուստի չէ որ հարկաւոր է, որ մեր ուսումնարանների սիստեմը, պրօգրամմը այդ գլխաւոր գաղափարից ծնված լինի։ Մենք տեսանք արդէն, թէ իր մի մասովը հոգեկիրթ ուսումնարանը պիտի մասնակցէ այդ գաղափարի իրագործվելուն, և որովհետև մեր նպատակը չէ ուսումնարանական հարցը իր ամբողջութեամբ քննել, ուստի մենք կը բաւականանանք միայն հարցնելով. թէ որ աստիճանի Տաճկա-Հայաստանի ուսումնարանը համապատասխանում է այդ երկրի վերականգման միայն հետևեալ պայման-

Ա. Ալպոյաճյան

Տպարան Ռ. Ա. Ալպոյաճյանց

Ի ՊԱՏԻՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. թէյ, կակաո, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրճկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱՒՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարդկերանց գուլբաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., րէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբոմներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և րէվոլվերների թիֆլիսում:

12—100

ԿԱՊԱԼՈՎ Է արվում **ԹՕՍՐՕԲՎԻ ՔԱՐՎԱՆՍԱՐԱՆ**, որ գտնվում է **ՀԱԻԼԱԲԱՐԻ** կամուրջի մօտ կողմը Թիֆլիս քաղաքի 3 բաժնի և պօլիցիական 13 մասնի մէջ: Յանկացողները հրաւիրվում են Հոկտեմբերի 1-ից **Թօսրօբեվի** տունը Գանձակայա փողոցի վրա, որտեղ կարելի է իմանալ կապալի պայմանները:

1—3

ԿԱՊԱԼՈՎ Է արվում **ՎԵԼԻՄԻՆՕՎՍԿԱՅԱ, ՆԱԳՕՐՆԱՅԱ ԵՒ ԳԱՆՁՎՍԿԱՅԱ** փողոցների վրա գտնված **ՏՈՒՆԸ**: Պայմանները կարելի է իմանալ այդտեղ **ԹՕՍՐՕԲՎԻ** բնակարանի մէջ Հոկտեմբերի 1-ից:

1—3

Հաւլաբարի Զորաբաշու ս. Գէորգ եկեղեցւոյ ծխական դպրոցը սեպտեմբերի 1-ից բացվեցաւ, ընդունում են 7—10 տարեկան տղաներ: Դպրոցը այժմ տեղափոխուած է Բէգլեարօվսկայա փողոցի վրա պ. Բաղրամովի (այժմ Լաչինեանի) տունը № 15.

Գրիգոր Մատինեանց
5—5

Յայտնում ենք Թիֆլիզում և գաւառներում մեր ծանօթ պատուիրողներին, որ Ախալցխայից վերադառնալով Թիֆլիզ Գանձակայա փողոցի վրայ՝ իշխանուհի Բէհբուդեանցի շինութեան մէջ բաց ենք արել խանութ, որտեղ սեպտեմբերի՝ 10-ից կը սկսենք կանանց հագուստներ ձևելու և կարելու պատուէրներ ընդունել: Նոյնպէս պատրաստ ենք մեզ պատուիրող գաւառացիների համար ուղարկել ամեն տեսակ գերիների զարդեր, գլխարկներ, գլխի և պսակի ծաղիկներ, չիթիլաներ, ձեռնոցներ, հովհարներ, փողպատներ, սպիտակեղէններ, կօրիներ և այլն:

Դերձակ Գրիգոր և Շուշանիկ Աննանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրաբաներ, կօնֆեկտներ, **ԿԱԿԱՕ**, բրինձ, ԱՄԱՆԵՂԷՆ, բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ, կերակրի ամաններ (судки), մատուցարանները, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, մատիտներ, տետրակներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, պլբօմներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսբրիչներ, կլէօնկա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, խերես, կօնեակ և այլն: ԹԷՅ մեծ քանակութեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ 44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54 ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ մաքնեզիա, խմոր ԾԱՐԱԻԻ դէմ, ԽԻՆԱՅԻ գինի ջերմի դէմ, կարբօլեան ՓՕՇԻ, հեղուկ և ՍԱՊՕՆ, բժշկական թուղթ վատերկլօզեաի համար, պարսկական փոշի: 66—100

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբելի և հայելիների:

ԿՈՒՄԻՍ ԿՈՎ Ի ԱՆԱՐԱՏ ԿԱԹԻՑ

Այս համեղ և առողջարար խմիչքը պատրաստում է ՎԱՐԹԱՆԵՍԵԱՆՑԸ բժշկական խորհրդի թոյլատուութեամբ: Կումիսի գործատունը և կաթնատունը գտնվում է Դաւիդօվկի փողոցում պ. Քանանեանցի տանը, որ գտնվում է Շիօեվի տան եւս: Պ. պ. ցանկացողները ամեն ժամանակ կարող են ստանալ թարմ կումիս նոյն իսկ կաթնատան մէջ գաւաթներով 7 կ. արժէքով և շիշերով 25 կ. արժ.: Հեռու քաղաքներ տանելու և երկար ժամանակ պահելու համար պատրաստում է զօրեղ կումիս, որի շիշը արժէ 50 կ. ամանով:—

Ա. Վրթանեսեանց
4—4

ԴԱՍԵՐ ՋՈՒԹԱԿԻ ՎԵՐԱ

ԱՇԱԿԵՐՏ ԱՊՕԼԻՆԱՐԻ ԿՕՆՏԱԿՈՒ դասեր է տալիս չութակի վերա իւր տանը և այլ տներում:

Հասցէն Դվօրցովօի փողոց Սարաչևի տանը սենեակ № 12. 2—10

ԼՕՑՍ ՏԵՍԱԻ
„ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԸ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԸ“

Վերնագրով գրքոյկը, էջմիածնի և սուրբ վատանջների վիմագրական պատկերով: Թիֆլիսում ծախվում է կենտրօնական գրավաճառանոցում, իւրաքանչիւրը 30 կոպէկով: Օտարաքաղաքացիք 10-ից ոչ պակաս ցանկացողները առանց փոստային ծախքը հոգալու, կարող են դիմել Մնացական Բէգլարեանցին հետեւեալ հասցէով. Въ Тифлисъ, Верхняя Таможенная улица, № 31, Мнацакану Бегларьянцу.

10—10

ԵՂԲԱՐՔ Կ. ԵՒ Ս. ՊՕՊՕՎՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՆԻՑ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ

Գրասենեակը կուզնեցկի կամրջի վրա, Կ. Ս. Պօպօվի տանը:

Պատիւ ունինք յայտնելու հասարակաց գիտութեան, որ մեր ֆիրմայի **ԹԷՅԻ** առևտուրի համար բաց արինք նորերումս նոր խանութներ և հետևեալ քաղաքներում:

ԽԱՐԿՈՎՈՒՄ—Պետրովսկի փողոցի վրա, սեփական տանը:
ԹԻՖԼԻԶՈՒՄ—Գօլովինսկի պրօսպեկտի վրա, **Միրիմանեանի** տանը:
ՍԷՎԱՍՏՕՊՕԼՈՒՄ—Բօլշոյ-Մօրսկօյ փողոցի վրա, **Կօգէն վաճառականի** տանը:

Ինչպէս այս, նոյնպէս և առաջուայ խանութները **Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ:**

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ և ԿԻԷՎՈՒՄ—Թէյն որ առած է ֆունտերի, կէս ֆունտերի և քառորդ ֆունտերի, ուղարկվում է մեր ղեկտուր պահեստի խանութից, որ գտնվում է **Մօսկվայում**, Կրասնօսէլսկի փողոցի վրա, սեփհական տան: 14—30

ՁԱՓԱՐԻԱՑ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱԻԱՃԱՌԱՆՈՑԻ“ հրատարակութեամբ լոյս են տեսած հետևեալ ԴԱՍԱԿԱՆ և ԸՆԹԵՐՑԱՆԵԼԻ ԳՐԵԱՆԳԸ:

1	Սիմէօնեանց Մ. Փողովածու թուաբանական խնդիրների մ. ա. (ամբողջ թուեր)	50 կ.
2	» Նոյնը մասն բ. (կոտորակներ)	50 »
3	» դասագիրք թուաբանութեան	65 »
4	Ղուկասեանց դասագիրք ընթերցանութեան	40 »
5	» » ընդհանուր պատմութիւն հին դարը մ. ա	80 »
6	Սիմէօնեանց Պ. Սրբազան պատմութիւն հին կտակարանի հ. ա	60 »
7	» » » Նոր կտակարանի հ. բ	60 »
8	Տէր Ակոբեանց դասագիրք ռուսաց լեզուի	60 »
9	» ընթերցարան մասն առաջին	25 »
10	» դասատետր աղօթից	7 »
11	Զ. Գրիգորեանց մարդակազմութիւն	50 »
12	Սիմէօնեանց Ն. դասագիրք ընդհանուր աշխարհագրութեան հ. ա. մասն նախագիտելիք 5 պատկերով	35 »
13	— Նոյնը հ. բ. մասն ուսումնական և քնական 31 պատկերով	60 »
14	— — հ. գ. մասն քաղաքական	60 »
15	Բահաթեանց քերականութիւն աշխարհիկ լեզուի	25 »
16	Երզնկեանց մանկական երգարան	20 »
17	— Ձայնագրեալ մանկական երգարան	40 »
18	Գամառ. Քատիպայ մանկական ոտանաւորներ և երգեր	20 »
19	Մերիմանեան թուաբանութիւն (թուեր)	12 »
20	Կօնդրատեվսկի գծագրութեան օրինակներ	40 »
21	Բերական-Այբենարան հին ոճով	10 »
22	Տողագրնիներ չորս երես թերթը	5 »
23	Շարժական տառեր մեծատառ և փոքրատառ թերթը	5 »
24	Գերենցի երկունք թ. դարու	1 ր.— »
25	— Թէոդորոս Ռշտունի	1 ր.— »
26	— Թորոս Լեռնի (2-դ տպագրութիւն)	1 ր.— »
27	Թագաւորեան փ ո ր ձ լեզուագիտական հետազօտութեան	50 կ.
28	Նազարեանց պօլուիմպերիալ—մանկական թատրօն	20 կ.
29	Ալքիմեանց Նալա և Դամայեանտի	20 կ.
30	Ա. Մ. ԵՊ. Դիւցազունք Հայկ, Արամ և Վահագն	30 կ.
31	Մանդինեանց Ազգային—ընտանեկան աշխարհ	25 կ.
32	— — — — — Դիւցազնական աշխարհ	30 կ.
33	— — — — — Նահապետական և հայրենի աշխարհ	65 կ.
34	Երզնկեանց դասագիրք Ձայնագրութեան	30 կ.
35	Տէր-Աբրահամեանց Հ. պատմութիւն 24 պատկերով	1 ռ.
36	Տնային բժշկական մարմնամարզութիւն	40 կ.

Վերոյիշեալ գրքերը տանից առնողներին 20% զեղչումն կը լինի գինը կանխիկ վճարողին:

6—20

Արդէն պատրաստի ունեմ 25 հատ ձայնագրած հայկական երգեր դաշնամուրի համար: Այդ երգերը ի լոյս ընծայելու համար ես ստորագրութիւն եմ բացել՝ տպագրութեան ծախքը մասամբ թեթևացնելու համար: Այժմ ես ստորագրվողների համար իւրաքանչիւր օրինակի գինը լինելու է 1 ր. 60 կ., իսկ տպագրվելուց յետոյ գինը կը լինի 2 ր.: Իւրաքանչիւր 5 օրինակ ստորագրվողը կը ստանայ 6 օրինակ:

Ահա տպագրվելու ձայնագրած երգերի անունները:
1. Այ մարդ այսօր... 2. Ախնապիշ անձայն... 3. Արիք որ երթամք... 4. Ազնիւ ընկեր... 5. Արիք Հայկազունք... 6. Արիացիր գոնեա... 7. Բաժակներ առնունք... 8. Գիշեր ցերեկ... 9. Երբ որ բացուին դռներ... 10. Եղբարք մի շուրջ... 11. Ջինուորիս երգեր... 12. Էր հեռանաս... 13. Թէ ծխաքարշը ձեռքիս... 14. Ինչ սիրուն ես... 15. Իմ սիրտս աղ ես... 16. Իմ սիրելի զաւակունք... 17. Խնդա այսօր... 18. Կաուր կաուր... 19. Կապոյտ երկնքում... 20. Հայրենիք սրբազան... 21. Հայոց աղջիկներ... 22. Մեր հայրենիք... 23. Մեր կեանքի նման... 24. Մայր Արաքսի... և 25. Ողջոյն քեզ Հայաստան: Այս 25 երգերը կը հրատարակվին մի տետրակում, որ կը ցանկան օգնելու այդ երգերի շուտով տպագրվելուն, թող անյապաղ դիմեն ինձ ամենայն տեղից հետևեալ հասցէով. Тифлисъ Ивану Артемьевичу Сузанаджянъ. Галлерея Арцруни въ музыкальную торговлю „Лира Италіи“

Ինձ մօտ վաճառվում են 4 հատ հայկական երգեր մի տետրակում դաշնամուրի համար ձայնագրած երգեցողութեամբ այն է 1. Ալի քաղաք. 2. Ինձ համար չէ. 3. Յուրաքը փչեց և 4. Ծիծեռնակ: Գինն է 1 րուբլի, օտարաքաղաքացիք 10 կոպէկ փոստի ծախք են վճարում եւ „Յիսնաղի տաւիղ Ֆրէյդուն“ երգարանը, որի մէջ 50 հատ նոր ազգասիրական երգեր են բովանդակվում, գինն 30 կոպէկ: Յանկացողք թող դիմեն ինձ վերոգրեալ հասցէով:

Յովհաննէս Սուզանաճեանց

ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

70—150

Дозволено цензурою, Тифлисъ 16 Сентября 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.